

4.3.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2010թ. հունվար-հունիսին հանրապետության տարածքում տեղաբաշխված զբոսաշրջիկների կոլեկտիվ և անհատական տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 44922 զբոսաշրջիկներ (ՀՀ ռեզիդենտներ)¹, ինչը 2009թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 6.2%-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

(մարդ)

	2009 թ. հունվար-հունիս	2010 թ. հունվար-հունիս	Աճի տեմպը, %	Տեսակարար կշիռը (2009թ. հունվար-հունիս,%)
Ընդամենը զբոսաշրջիկներ²	42295	44922	106.2	100
որոնցից ըստ նպատակի՝				
գործնական	15650	19078	121.9	42.5
հանգստի և ժամանցի	18990	18374	96.8	40.9
բուժման	2280	2663	116.8	5.9
այլ	5375	4807	89.4	10.7

¹Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջիկության համաշխարհային կազմակերպության մեթոդաբանության (ՁՀԿ) **ներքին զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

² Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: